Զբքիս... երեսում գրել եմ, թէ մնացել է միայն տաճարի կաթուղիկէն շինելու, որոյ ծախսը յուսով եմ, որ բազուեցի բարեպաշտ ազգայինք չեն խնայել շընորհելու հայլն։

Եւ յիրաւի շատ մնաց, շատ երկարեց Սաղիանի վանքի կաթուղիկէի շինութիւնը (1887—93). բայց ուշանալու պատճառը մի թեթև բան էր—այն է գրամն, մանաւանդ թէ Սաղիանցիք միայն ցանկանում էին քարով շինած տեսնել, որոյ ծախքը կլինէր 1500 մանէթ, իսկ Շամախեցիք ցանկանում էին իրենց եկեղեցւոյ կաթուղիկէի նման փայտով շինած տեսնել և երեսը ժէշտած, որոյ ծախքը կլինէր մինչև 600 բուբլի, իսկ ես ժամանակին և հանգամանքին էի նայում, և արդարև ժամանակն ինքնին բերեց պտուղը և Աստուծոյ շնորհիւ յաջողացրեց գործը։

«Աստուած՝ որ յաջողէ զամենայն ինչ, որով և կեամք և շարժիմք և եմք» յաջողեց և ինձ 1893 թուին ձմեռը Բաղու քաղաքում բնակուել՝ իբաւամբ առաջնորդական պաշտամանս, ուր և քանի կարևոր եկեղեցական և դպրոցական գործեր կարդի դնելուց յետոյ՝ հոգացի և Սաղիանի վանքի տաճարի կաթուղիկէի շինութեան համար։

Բաղուի եկեղեցական դժուար գործոց Ա. էր ծխաբաժանութեան գործը, որ չկար Բաղուի եկեղեցւոյ մէջ և միշտ անբաւականութեան և խռովութեան պատճառ էր լինում քահանայից և ժողովրդոց, որոյ համար կարող է կարդացողը տեսնել զբքիս... երեսն, Բաղուի տեղագրութեան մէջ.[1]) Բ, նոր և երրորդ եկեղեցւոյ շինութեան հոգսը. որոյ գետինը տրուած էր Բաղուի քաղաքային վարչութիւնից. Դ, եկեղեցական դպրոցը թեմական դպրոցի վերածելու հոգսը, որոյ հաստատութիւնը մնաց վեհափառ տէր Մկրտիչ կաթուղիկոսի գաղտնեանը և տնօրէնութեանը,[2]) Դ, աղքատանոցի նոր հոգաբար-

---

[1]) 1893 թուին վերջացաւ և հաստատուեց Բաղուի ծխաբաժանութիւնը կամ թաղաբաժանութիւնը ութ քահանայի բաժնով։

[2]) Թեմական դպրանոցի ի Բաղու փոխադրելու համար գրել եմ տէր